2022-2023 ուստարում ուսանողների և դասախոսների վերհանված խնդիրների և կարիքների վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

27.10.23թ., տն. նիստ

2022-23 ուստարում ՄԿՈԱ բաժինը մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության և ամբիոնների հետ համագործակցությամբ տարբեր մեխանիզմներով վեր է հանել դասախոսների և ուսանողների մի շարք խնդիրներ և կարիքներ: Ուսումնասիրության հիմնական մեխանիզմները եղել են հարցումները, որոշ դեպքերում նաև հանդիպում-քննարկումները: Խնդիրները հավաքագրվել են 2022-23 ուստարվա ընթացքում իրականացված շուրջ 11 տարբեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա: Նշեմ, որ 2023թ.-ի ապրիլ մայիս ամիսներին բաժինը հանդիպում է ունեցել գրեթե բոլոր կրթական ծրագրերի 1-ին կուրսի ուսանողների հետ և քննարկել գնահատման բազմագործոն համակարգի, մասնավորապես ինքնուրույն աշխատանքների իրականացման հետ կապված խնդիրները:

Քանի որ բաժինը 2023թ.-ի հունիսի հերթական տնօրենության նիստում ներկայացրել էր մինչ այդ հավաքագրված խնդիրների ու դրանց լուծուների վերաբերյալ հաղորդագրություն, ապա այս զեկույցի մեջ ներառված են միայն բաժնի կողմից վերջին 6-7 ամիսների ընթացքում իրականացրած ուսումնասիրությունների արդյունքներից հավաքագրված խնդիրները, և ՈՒՄՎ-ի կողմից 2022-23 ուստարվա ընթացքում իրականացրած հետևյալ հարցումներից հավաքագրված խնդիրները.

- դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2 կիսամյակների հարցումներից,
- մասնաճյուղի պրակտիկանտ ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծքիների ուսումնասիրության հարցումից,
- մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների ուսումնասիրության հարցումից:

Բաժնում հավաքագրված խնդիրները խմբավորվել են ըստ մի քանի ուղղությունների և գործընթացների:

Կան բավականաչափ խնդիրներ, որոնք պարբերաբար նշվում են ուսանողների և դասախոսների կողմից, և դրանց տրված տարատեսակ լուծումները, այնուամենայնիվ, բավարար չեն և հետևաբար նորից բարձրաձայնվում են:

Օրինակ, **հետազոտական աշխատանքների իրականացման ընթացքում հանդիպող խնդիրներ**, որոնք ևս մեկ անգամ շեշտադրվել են.

- անհրաժեշտ մասնագիտական գրականության բացակայություն,
- տվյալների հավաքագրման դժվարություն և աղբյուրների ու նյութերի բացակայություն,
- խմբային իրականացվող աշխատանքերում ներգրավված ուսանողների ոչ հավասարաչափ աշխատանք և հետքրքրվածություն աշխատանքի նկատմամբ, նաև նման աշխատանքերի օբյեկտիվ գնահատման դժվարություն, կամ գնահատման չափանիշների ոչ հստակություն,
- ուսանողի և հետազոտական աշխատանքը ղեկավարող դասախոսի ոչ արդյունավետ համագործակցություն,
- թեմաների ոչ արդիականություն, դրանք ուսանողների կողմից ընտրելու հնարավորության բացակայություն (ԱԼԳ, Հոգեբ., ֆինանսներ, ՀԼԳ, Դիզայն),

Նշեմ, որ այստեղ բավականաչափ նեղ մասնագիտական խնդիրներ ներկայացրել են «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողները։

Այժմ ըստ ուղղությունների ներկայացված են վեր հանված մի քանի հիմնական խնդիրները։

1. **Ուսումնառության և դասավանդման հետ կապված խնդիրներ.**
   - նկարչության տարբեր տեխնիկաների տիրապետելը, դրա համար ԿԱՖ-ի ուսանողները առաջարկում են անց կացնել վարպետաց դասեր, կազմակերպել մասնագիտական ճամբարներ,
   - ԿԱՖ-ի սրահի թույլ համակարգիչները, դրանք հնարավորություն չեն տալիս արդի ծրագրերն արդյունավետ օգտագործել դասերի ժամանակ,
   - ուսանողների օբյեկտիվ և թափանցիկ գնահատումը, առաջարկում են իրականացնել հանձնաժողովով, կամ այլ մասնագետների ներգրավմամբ (ԿԱՖ, ՏԳՖ, շրջանավարտներ),
   - օնլայն դասերի ոչ արդյունավետությունը՝ չլինեն,
   - ավարտական աշխատանքների **թեմաների ոչ արդիականությունը և կիրառելիությունը** (նշել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները),
   - անընդհատ կարդացվող դասախոսությունները, նշում են, որ դրանք ձանձրալի են, ծանր են և հոգնեցող, կամ նույն դասախոսին անընդհատ լսելը դժվար է,
   - ԱԼԳ, ՖԼԳ, ՌԼԳ կրթական ծրագրերի ուսանողների մոտ խոսակցականի անբավարար մակարդակը, առաջարկում են ուշադրություն դարձնել խոսակցականին, ոչ միայն քերականությանը, իսկ մնացած կրթական ծրագրերում օտար լեզուների իմացության ցածր մակարդակ,
   - դասախոսները լինեն խստապահանջ, նաև լինեն հարգալից ուսանողների նկատմամբ։

2. **Անհրաժեշտ ռեսուրսների և միջոցների հետ կապված խնդիրներ**
   - շենքային պայմանները (ԲԳՖ և ԿԱՖ), մասնավորապես՝ մասնաշենքի տանիքի խնդիրը,
   - լսարանների անբավարար քանակը (ՀԳՖ և ՏԳՖ, շրջանավարտներ),
   - սպորտդահլիճում գույքի և անհրաժեշտ պարագաների պակասություն,
   - ԿԱՖ-ում անհրաժեշտ սարքավորումների պակաս, արդուկները սարքին չեն, կարի մեքենաները չեն բավարարում,
   - մասնաշենքերի ջեռուցումը։

3. **Պրակտիկանտների մասնագիտական գիտելիքների, հմտությունների և կարողությունների հետ կապված խնդիրներ, որոնք նշել են արտաքին շահակիցները.**
   - <u>**մանկավարժական պրակտիկաների**</u> դեպքում խնդիրներ կապված ուսանողների կողմից ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, դասավանդման ժամանակակից մեթոդների իմացության և կիրառման, ինքնակրթության և նոր գիտելիքների ձեռք բերելու անբավարար ձգտման, դպրոցական դասագրքերի իմացության հետ,

- **<u>օտար լեզուների</u>** ուսանողների դեպքում խնդիրներ կապված գրագետ խոսելու կարողության, տարբեր բնագավառներին վերաբերող նյութերի թարգմանության դժվարությունների հետ,
- **<u>ֆինանսներ</u>** կրթական ծրագրի ուսանողների դեպքում խնդիրներ կապված հաղորդակցական հմտությունների, հաշվապահական հաշվառումից գիտելիքների պակասի, բանկային օրենքներին տիրապետելու, տվյալների հետ աշխատելու կարողությունների հետ:

4. Շրջանավարտների մասնագիտական և մարդկային որակների հետ կապված խնդիրներ, որոնց մասին նշել են արտաքին շահակիցները (27 շահակից)

Ընդգծված նկատվում է անբավարարվածություն մեր շրջանավարտների հետևյալ որակներից (ի տարբերություն նախորդ տարիների).

- մասնագիտական գիտելիքների պակաս (գիտելիքներն ընդհանրական են՝ 5-ը),
- գործնական հմտությունների պակաս,
- տեղեկտվական տեխնոլոգիաների թույլ տիրապետում (4-ը),
- ընդհանուր ցածր զարգացվածություն, հաղորդակցվելու կարողությունների և մասնագիտական խոսքի ցածր մակարդակ (8-ը):

5. Գնահատման բազմագործոն համակարգի հետ կապված խնդիրներ, որոնք նշել են 1-ին կուրսեցիները

Գնահատման նոր **<u>բազմագործոն համակարգում</u>** գնահատման բաղադրիչների և դրանց արդյունավետության վերաբերյալ իրենց դժգոհությունն են հայտնել միայն «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողները: Նրանք գտնում են, որ.

1. Գնահատման տարբեր բաղադրիչների կիրառությունն ավելի շատ ծանրաբեռնում է ուսանողին, բավականին ժամանակատար են, չեն խթանում ուսանողին, արդյունավետ չեն ընթացիկ քննություններով առարկաների համար,
2. Ոչ բոլոր դեպքերում է բաղադրիչների կիրառությունը արդյունավետ, քանի որ հանձնարարվող առաջադրանքները պահանջում են ավելին, քան իրենց ձեռք բերած գիտելիքներն են,
3. տարբեր բաղադրիչների համար գնահատման մեթոդները և ձևերը ճիշտ չեն ընտրված:

Իսկ **<u>ինքնուրույն աշխատանքների</u>** իրականացման և գնահատման հետ կապված նշել են.

- շատ են տրվող ինքնուրույն աշխատանքները, նրանք կրում են ձևական բնույթ, հանդիսանում են միջոց միավոր վաստակելու համար,
- ինքնուրույն աշխատանքներն ավելորդ են և ժամանակատար, անհրաժեշտ են ոչ բոլոր առարկաների դեպքում, կարելի է կատարել միայն եզրափակիչ գնահատումով մասնագիտական առարկաներից,
- բավարարված չեն ինքնուրույն աշխատանքների համար ստացած գնահատականներից, աշխատանքը լիարժեք չի գնահատվում, գնահատականները երբեմն չեն համապատասխանում կատարված աշխատանքին:

Այստեղ «Պատմություն» կրթական ծրագրի ուսանողները ավելորդ են համարում տեսանյութերի ներկայացման տարբերակը:

6. Դասախոսների և ուսումնաօժանդակ անձնակազմի խնդիրներ

- սանիտարահիգիենիկ վիճակը,

- ջերմաստիճանային պայմանները,
- հյուրանոցում դասախոսներին տրամադրվող սենյակները մաքրելու համար փոշեկուլների անհրաժեշտություն, բարեկարգել, վերանորոգել հյուրանոցը, ուժեղացնել ինտերնետ կապը,
- դասախոսի աշխատավարձը,
- լրացուցիր աշխատանքի խրախուսում,
- վերանայել մագիստրատուրայի հետ կապված զեղչերը,
- բնագիտական ուղղվածությամբ բացել նոր կրթական ծրագիր։

Հավաքագրված խնդիրները բաժինը ուղարկում է համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանք քննարկելու և հնարավոր լուծումներ տալու համար։

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին